2496/26.03.2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«25» մարտ 2020թ. N 1099 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 30-րդ կետի, Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 0103023220 առ 13.03.2020թ փորձագիտական եզրակացությունը,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Ընդհանուր հիմունքներով գրանցման ընթացակարգով գրանցել երաշխավորված թվով 5 դեղը՝ համաձայն հավելված 1-ի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ջ. Դարբինյանին՝ նախարարի հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ին:

3.«Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Վ.Գաբրիելյանին՝

1) Սույն հրամանը հրապարակել օրենքով սահմանված կարգով:

2) 3 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել դեղերի գրանցման հավաստագրերի ներկայացումը Առողջապահության նախարարությանը:

3)Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության դեղորայքային քաղաքականության և բժշկական տեխնոլոգիաների վարչության պետ Վ. Գրիգորյանին՝

1) 2 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել դեղերի գրանցման հավաստագրերի ներկայացումը նախարարի հաստատմանը և տրամադրել Փորձագիտական կենտրոնին:

26.03.20

5. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում ապահովել հավելվածում նշված դեղերի գրանցման հավաստագրերի տրամադրումը հայտատուներին:

6.Դեղի գրանցման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

25.03.2020

X

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարի
2020թ. մարտի 25 - ի N 1099 – Ա հրամանի

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԴԵՂԵՐԻ ՑԱՆԿ
ՀԱՄԱՁԱՅՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ N 162-Ն ԱՌ 28.02.2019 ՈՐՈՇՄԱՆ

| Հ/Հ | Առևտրային անվանում | Միջազգային չպատենտավորված (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումներ | Դեղաձև | Դեղաչափ և թողարկման ձև (փաթեթավորում) | Արտադրող ֆիրման | Երկիր | Գրանցման հավաստագրի իրավատեր | Երկիր | Բացթողման կարգ | Եզրակացության համար և ամսաթիվ | Գրանցման ընթացակարգ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Նորվասկ | ամլոդիպին (ամլոդիպինի բեզիլատ) | դեղահատեր | 5մգ; (30/3x10/) բլիստերում | Պֆայզեր Մանուֆակչըրինգ Դոյչլանդ ԳմբՀ, Բադեն Վուրթեմբերգ, Մուսվալդալի 1, 79090 Ֆրայբուրգ- փաթեթավորող, որակի և բաց թողնման հսկող, Պֆայզեր Ֆարմասյուտիկալս ՍՊԸ, 1.9կմ Ռոուդ 689, Վեգա Բայա, Պուերտո Ռիկո 00693, ԱՄՆ- բալք արտադրող | Գերմանիա | Պֆայզեր Հ.Ս.Պ. Քորփորեյշըն, 235, Իստ 42-րդ փ., Նյու-Յորք, 10017 | ԱՄՆ | Դ | 19129 13.03.2020 | Ընդհանուր հիմունքներով (նոր կարգ) |
| 2 | Նորվասկ | ամլոդիպին (ամլոդիպինի բեզիլատ) | դեղահատեր | 10մգ; (30/3x10/) բլիստերում | Պֆայզեր Մանուֆակչըրինգ Դոյչլանդ | Գերմանիա | Պֆայզեր Հ.Ս.Պ. Քորփորեյշըն, | ԱՄՆ | Դ | 19130 13.03.20 | Ընդհանուր հիմունք |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ԳմբՀ, Բադեն Վյուրթեմբերգ, Մուսվալդալի 1, 79090 Ֆրայբուրգ- փաթեթավորող, որակի և բաց թողնման հսկող, Պֆայզեր Ֆարմասյուտիկալս ՍՊԸ, 1.9կմ Ռոուդ 689, Վեգա Բայա, Պուերտո Ռիկո 00693, ԱՄՆ- բալք արտադրող | | 235, Իստ 42-րդ փ., Նյու-Յորք, 10017 | | | 20 | ներով (նոր կարգ) |
| 3. | Էմկոր 2.5 | բիսոպրոլոլ (բիսոպրոլոլի ֆումարատ) | դեղահատեր թաղանթապատ | 2.5մգ; (30/3x10/) բլիստերում | ԳՄ Ֆարմասյուտիկալս ՍՊԸ, Ֆոնիչալա 65, 0165 Թբիլիսի | Վրաստան | ԳՄ Ֆարմասյուտիկալս ՍՊԸ, Ֆոնիչալա 65, 0165 Թբիլիսի | Վրաստան | Դ | 19150 13.03.2020 | Ընդհանուր հիմունքներով (նոր կարգ) |
| 4. | Էմկոր 5 | բիսոպրոլոլ (բիսոպրոլոլի ֆումարատ) | դեղահատեր թաղանթապատ | 5մգ; (30/3x10/) բլիստերում | ԳՄ Ֆարմասյուտիկալս ՍՊԸ, Ֆոնիչալա 65, 0165 Թբիլիսի | Վրաստան | ԳՄ Ֆարմասյուտիկալս ՍՊԸ, Ֆոնիչալա 65, 0165 Թբիլիսի | Վրաստան | Դ | 19151 13.03.2020 | Ընդհանուր հիմունքներով (նոր կարգ) |
| 5. | Զումմ-25 | դեքսկետոպրոֆեն (դեքսկետոպրոֆենի տրոմետամոլ) | դեղահատեր թաղանթապատ | 25մգ; (10) բլիստերում | ԳՄ Ֆարմասյուտիկալս ՍՊԸ, Ֆոնիչալա 65, 0165 Թբիլիսի | Վրաստան | ԳՄ Ֆարմասյուտիկալս ՍՊԸ, Ֆոնիչալա 65, 0165 Թբիլիսի | Վրաստան | ԱԴ | 19152 13.03.2020 | Ընդհանուր հիմունքներով (նոր կարգ) |